զպատերազմիլն 3 օր, սատակեցաւ փաշան որ էր զօրագլուխ ամենից զօրաց, և կոչէր սլէյման փաշա իպն ատմ, և բարձեալ տարան զգէշ մարմինն ի Դամասկոս, և զօրքն ամենայն ցրուեցան աստուծով և հանդարտեցաւ լեառն Աստուծոյ զօրութեամբն [,] ոչ կարէ ելանել [.] բայց բազում նեղութիւն և վնաս կրէր երկիրն և ժողովուրդն, և այս մին զարմացման գործ և նշան եղեւ օրհնութեամբ և աղօթիւք սուրբ փափին, ի լուր և ի տես ամենից ի լեառն քէսբրվան.. ցուցանի, զի կոնտակն և ներողութիւնքն վ.եհին թարգմանեցեալ արապերէն յառաջագէմ յղեցի ընդ տիրացու սիմաւոնիւ ի վանքն. եհաս ի օգոստոսի 1.ն. կային անդ ի Բերիոյ հալածականք, յակոբ եպիսկոպոսն բերիոյ, քահանայք և ժողովուրդք փախստականք. լուր եղեւ բազմաց թէ օրհնութիւն և ներողութիւնք հասին ի վանքն յիսուսի փրկչին ի սրբոյ յաթոռոյն։ Ժողովեցան բազումք ի տօնի այլակերպութեան ի վանքն վասն նոր ներողութեան և օրհնութեան կոնտակի սուրբ փափին, և երկիրն պաշարեցեալ ի չար զօրաց և իբրեւ կատարեցին զամենայն, ասէ քարոզատուն. Որովհետեւ այսքան օրհնութեամբ և պարգեւօք լցոյց զմեզ զսրբազան փափն ի գանձուց սրբոյ եկեղեցւոյ, պարտիմ գոհանալ զաստուծոյ և շնորհակալ լինել ի սրբութենէն, և խնդրել ի յաստուծոյ, յաճումն սրբոյ հաւատոյ, ջնջումն հերետիկոսութեանց, բարձ[ր]ացումն եկեղեցւոյ, միաբանութիւն թագաւորաց, և սրբոյ վ.եհին երկարութիւն կենաց։ Եւս աղօթիւք սրբութեան և յաւուրս շնորհիւ խնդրեմք ի յաստուծոյ ազատութիւն երկրին մերոյ ի չար և անօրէն զօրաց, և ասեմք զլիթանիեայն յիսուսի Փրկչին մերոյ ի խորոց սրտէ. ջերմեռանդութեամբ և լալիւ կատարեցին և արձակեցան. և յետ երից աւուրց եկն աւետիս թէ չարն սատակեցաւ յանկարծ մահուամբ, որպէս յուլիեանոս, ցրուեցաւ զօրքն ամենայն և խաղաղացաւ երկիրն, որպէս էրէկն և եռանդն։ Դարձեալ և այս թղտաբեր քահանայն է ի սպահան քաղաքէն, նոր յուղարկաւ, գնա ի յուխտ ի Հռոմ, տեսի զսա շնորհաց[1].... և հեզահոգի։ Խնդրեմ յիսուսէ զի հաստ[ատուն] մնասցէ սահակ եպիսկոպոսն, գինէոս եպիսկոպոսն, հայր անտոնն, հայր յովսէփն, հայր մատթէոսն որք ընդ իս են յաղօթս խնդրեն և ես ընդ նոցա, ողջ ի տէր ամէն

Պետրոս Ա. Կաթողիկոս հայոց
Հաստատեցեալ ի սրբոյ Գահէն

ՃԻԵ.

Մարտիրոսագրութեան մը մանրամասն պատմութիւնը կը դնէ մեր առջև Հ. Միքայէլ վարդապետ. այդ շահեկան տեղեկութիւնը այնպէս կը թուի մեզ՝ որ պակաս մը պիտի լեցնէ Հայ վկայաբանութեան մէջ։

Գերյարգելոյ Աբբայ Հօրդ մերոյ, տեառն տեառն Մխիթարայ
Աստուածաբանութեան Վարդապետի

. . . Եկեսցուք յայժմ առ նորագոյն ինչ, զի լուաք թէ սակաւ ինչ խումբ պարսկական եկեալ ի սեբաստիա, իշխանեալ ոչ ումեք վնասեն, և զոր ինչ առնուն հատուցանեն, զոմանս փուռս հացագործաց ինքեանց սեփականեալ, և զոմանս հասարակ քաղաքացւոց թողեալ. ասած լինին թէ մերոյ թագաւորին դէմ ենք եկեալ, որ աստի խմբով սոցին գնալոց է. նաեւ լուաք թէ թահմազն զպասրա, զնինվէ, զքէրքիւտ սեփականեալ է, է և ի ներքոյ տիգրանակերտի։ Նաեւ իբրու 20 օր է, որ աստ երեքտասան ամաց պատանի մի, ազգաւ հայր[2] մարտիրոս անուն մարտիրոսացաւ, զրպարտութեանց հանդիպեալ, իբր

1. Ասկէ վերջ կայ ուրիշ անընթեռնելի բառ մը։
2. Անշուշտ հայ պէտք է ըլլայ։